ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ - 2017

# ԵՐԿՐՈՒՄ ՂՈՂԱՆՋԵՑԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԵՐԸ»

*Մայիսի 19-ին Վրաստանի հանրային 2084 դպրոցներում ղողանջեցին 2016-2017 ուսումնական տարվա ավարտական վերջին զանգերը: Այս տարի դպրոցին հրաժեշտ են տալիս, ընդհանուր առմամբ, 34809 շրջանավարտներ:*

*Դպրոցական աշխույժ ու մանկական ուրախ օրերին հաջորդում է կյանքի պատասխանատվությամբ լի փուլը: Այդ փուլի առաջին քայլը դպրոցական քննություններն էին «Վրաց լեզու եւ գրականություն», «Աշխարհագրություն», «Օտար լեզու», «Կենսաբանություն», «Պատմություն», «Ֆիզիկա», «Մաթեմատիկա» եւ «Քիմիա» առարկաներից, որոնք մայիսի 21-ից 25-ը հաջողությամբ հանձնեցին գրեթե բոլոր շրջանավարտները: Ապա նրանք դպրոցում ստացած իրենց գիտելիքները կչափեն երկրի կամ արտերկրի բուհերում, քոլեջներում ու տարբեր ուսումնական հաստատություններում:*

## ԺՊՏՈՒՆ ԱՉՔԵՐՈՒՄ` ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

*Մայիսի 19-ին, մայրաքաղաքի թիվ 104 դպրոցի տոնականորեն զարդարված, լեփ-լեցուն դահլիճում «Վերջին զանգի» ամենամյա ավանդական միջոցառումն էր: Դպրոցի 16 շրջանավարտները միախառնել էին իրենց ուրախությունն ու տրտմությունը, ծիծաղն ու թախիծը: Նրանց ժպտուն աչքերում արցունքներ են. ընդամենը մի քանի օր, եւ նրանք կթողնեն այդքան հարազատ դարձած դպրոցը, դասասենյակն ու սեղան-նստարանները, հրաժեշտ կտան դպրոցական անհոգ օրերին, բոլոր նրանց, ովքեր իրենց զինել են խոր ու կայուն գիտելիքներով եւ ուղղորդել, բերելհասցրել նոր կյանքի շեմին:*



Ուրախությամբ նշենք, որ այս տարվա շրջանավարտներից երեքը ոսկե մեդալի հավակնորդներ են:

Մեկը մյուսին հաջորդող, ոսկեղենիկ հայերենով ու գրագետ եւ սահուն վրացերենով շրջանավարտները իրենց երախտագիտության ու հրաժեշտի խոսքերն են ուղղում, երգեր նվիրում սիրելի տնօրենին, ուսմասվարին, դասղեկին, ուսուցիչներին:

Շրջանավարտներին շնորհավորում են նրանց փոխարինողները` ժիր ու կայտառ ապագա առաջինդասարանցիները, որոնց թիվն այսօր 28 է դեռ: Նրանցից տասը Վիրահայոց թեմի «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի ավարտական խմբի 18 սաներից են:

«Վերջին զանգի» միջոցառմանը նոր կյանքի կերտողներին շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքեր հղեցին դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Վիրապ քահանա Ղազարյանը, փոխտնօրեն Ալմարի Սիրադեղյանը, դասղեկ Ալլա Գրիգորյանը, պրոֆեսոր Էմմա Ախտյանը, գրադարանավարուհի Հասմիկ Անտոնյանը, վրաց լեզվի ուսուցչուհի Լիա Նացվլիշվիլին, վաստակաշատ մանկավարժ Նորայր Բաղդասարյանը:

Բարի՜ երթ ու կանաչ ճանապարհ ձեզ, սիրելի շրջանավարտներ:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

## ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ` ԵՐԱԽՏԻՔԻ ՈՒ ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈ ՄԹՆՈԼՈՐՏ

*Ինքնատիպ ու առանձնահատուկ էր մայրաքաղաքի թիվ 103 հանրային դպրոցի այս տարվա «Վերջին զանգի» արարողությունը: Այն առաջին անգամ կայացավ նորակառույց դպրոցի հանդիսությունների դահլիճում:*



Հույզերը, ապրումներն ու զգացմունքները տեղի էին տալիս եւ, միախառնվելով իրար, համակել էին բոլորին, հատկապես` բեմում կանգնած սպիտակ վերնաշապիկներով 15 դեռահաս երիտասարդներին:

Երախտիքի եւ անկեղծ սիրո անթաքույց զգացումներով աշակերտները հրաժեշտի խոսքեր էին հղում հարազատ կրթարանին, ուր 12 երկար տարիների ընթացքում ստացել են գիտելիքներ, ձեւավորվել է նրանց աշխարհընկալումը: Նրանք անթերի հայերենով եւ վրացերենով բանաստեղծություններ, երգեր էին ձոնում սիրելի ուսուցիչներին, երկու հայրենիքներին` Վրաստանին ու Հայաստանին: Գրավիչ էին նաեւ շնորհաշատ սաների հեզաճկուն պարային կատարումները (պարուսույց` Անգելինա Նազարյան-Քոչյան): Բարձրաճաշակ գրական-գեղարվեստական մոնտաժը կազմել էր դասղեկ, մայրենի լեզվի վաստակաշատ մանկավարժ Գայանե Մխիթարյանը:

Շնորհավորանքի ջերմ ու սրտաբուխ ելույթով հանդես եկան դպրոցի առաջին դասարանցիները (ուսուցչուհի` Լուիզա Մուրադյան): Իրենց ելույթներում դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեն, փոխտնօրեն Հասմիկ Պապիկյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, տողերիս հեղինակը իրենց գոհունակությունը հայտնեցին տնօրինությանն ու մանկավարժներին նման լավ սերունդ կրթելու, դաստիարակելու համար:

Հավելենք նաեւ, որ միջոցառմանը ներկա էին «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, Վիրահայոց թեմի մամլո եւ լրատվության բաժնի տնօրեն Սուսաննա Խաչատրյանը, հայոց լեզվի բազմավաստակ ուսուցչուհի Ռոզա Ջոհրաբյանը, «Վրացահայերի միություն» կազմակերպության համակարգող Մարի Առաքելովան:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ***

## ՊԵՏՐԵ ԿԱՆԿԱՎԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

*Մայիսի 19-ին Ախալքալաքի քաղաքի երկու դպրոցներում` Հովհ. Թումանյանի անվան հայկական հանրային թիվ 1 եւ վրացական թիվ 3 դպրոցում, հնչեց վերջին զանգը:*



Այս երկու դպրոցների շրջանավարտներին անձամբ շնորհավորելու էր եկել Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության պետնախարարի տեղակալ Պետրե Կանկավան: Շրջանավարտներին շնորհավորելու էին եկել նաեւ Ախալքալաքի Շրջանային ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանն ու Ախալքալաքի կրթական ռեսուրս-կենտրոնի ղեկավար Թերեզա Չիվչյանը եւ ուրիշներ:

Ընդհանուր խառնաշփոթի մեջ բոլորը ժպտում են: Շրջանավարտները մի շարքի կանգնած վերջին հրաժեշտն են տալիս այդքան հյուրընկալ հարազատ դպրոցին: Տնօրեն, դասղեկ, ծնող հրաժեշտի խոսքեր են ուղղում երիտասարդներին, որին հաջորդում են շրջանավարտների հումորային ու հետաքրքիր համարները:

## ԱԽԱԼՑԻԽԵԻ ԹԻՎ 3 ԴՊՐՈՑ. 60 ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

*Ինչպես երկրի բոլոր հանրակրթական, այնպես էլ` Ախալցիխե քաղաքի եւ մունիցիպալիտետի դպրոցներում, մայիսի 19-ին հնչեցին դպրոցական վերջին զանգը ազդարարող ղողանջները: Ինչպե՞ս անցավ տոնական «Վերջին զանգը», եւ ի՞նչ տրամադրություն էր տիրում դպրոցներում հարցերով մենք զրուցեցինք Ախալցիխեի թիվ 3 դպրոցի տնօրեն Սուսաննա Ակոպովայի հետ:*

***- Տիկին Սուսաննա, ինչպե՞ս անցավ «Վերջին զանգի» միջոցառումը Ձեր դպրոցում:***

- Ուրախությամբ նշեմ, որ մեր դպրոցն այս տարի ավարտում են 60 շրջանավարտներ, որոնք, ինչ խոսք, լավ էին նախապատրաստվել «Վերջին զանգի» միջոցառմանը: Տոնականորեն, ծաղիկներով ու փուչիկներով զարդարված լեփ-լեցուն դահլիճում, որտեղ ներկա էին ուսուցիչներ, ծնողներ, բազմաթիվ հյուրեր: Մեր շրջանավարտները գրագետ հայերենով ու սահուն վրացերենով իրենց երախտիքի խոսքերն ուղղեցին սիրելի դպրոցին, ուսուցիչներին: Նրանց շնորհավորեցին ու բարի երթ մաղթեցին, այսօրվա դրությամբ դեռեւս 63 գրանցված մեր դպրոցի ապագա առաջինդասարանցիները:



Մեր բարի մաղթանքներն ու ջերմ խոսքերը շրջանավարտներին հղեցինք ինչպես մենք` ուսուցիչներս, այնպես էլ` հյուրերն ու ծնողները: Ամեն ինչ լավ անցավ, ծափով ու ծիծաղով, երգ ու պարով, բոլորը համակված էին տոնական տրամադրությամբ, բայց նաեւ հրաժեշտի մի փոքր թախիծով ու տրտմությամբ:

***- Իսկ ինչպե՞ս անցան «Վերջին զանգի» միջոցառումները Ախալցիխեի մունիցիպալիտետի հայկական գյուղերի դպրոցներում:***

- Իհարկե, տեղյակ եմ: Զանգահարել եմ, նրանց եւս շնորհավորել: Մունիցիպալիտետի 15 գյուղերից` Սխվիլիսի` 8, Փոքր Պամաճ` 11, Ծղալթբիլա` 5, Վալե` 2, Նաոխրեբի` 5, Ծուղրութ` 13 շրջանավարտները եւս մեծ շուքով, հանդիսավորությամբ ու բարձր տրամադրությամբ են նշել իրենց «Վերջին զանգը»:

*Զրուցեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԻՆՈԾՄԻՆԴԱ. 18 ՈՍԿԵ ԵՎ 9 ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ

*Վերջին դասն ազդարարող զանգի ղողանջը Նինոծմինդայի մունիցիպալիտետի 38 կրթօջախներից 28 հանրային դպրոցներում հնչեց մայիսի 19-ին: Այս տարի շրջանն ունի 300 շրջանավարտ (255-ը` տասներկուերորդ դասարանցիներ, 40-ը` էքստեռն):*



Օրը տոնական էր քաղաքում եւ մունիցիպալիտետի գյուղերում: Այն լի էր հանդիսավորությամբ, հուզականությամբ` ինչպես մասնակիցներից յուրաքանչյուրի, այնպես էլ` կյանքի հասուն փուլ մտնող շրջանավարտների համար, քանզի օրը գիտելիքների հանրագումարի կոչնակն էր ու կյանքի ամենահիշարժան էջերից մեկը:

Օրվա բովանդակությունը նույն ցնծությունն ուներ մունիցիպալիտետի փոքր ու մեծ գյուղերում, մասնավորապես` Հեշտիայում, Գանձայում, Փոկայում, Մեծ Արագյալում եւ այլուր:

...Բարի երթ մաղթելով Գանձայի Ռուսթավելու անվան դպրոցի 18 ավարտականներին եւ իրենց գիրկն առնելով 14 նորեկ առաջինդասարանցիների` տնօրեն Սարգիս Դուրգարյանը պատգամեց երբեք չկորցնել կապը հարազատ կրթօջախի, բնօրրանի եւ միմյանց միջեւ:

Ձեռքբերումներ ու նվաճումներ մաղթեց իր 12 շրջանավարտներին եւ 10 առաջինդասարանցիներին Հեշտիայի թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն Նանե Հովսեփյանը:

Վերջին դասը մեկ այլ խանդավառությամբ անցավ նաեւ Մեծ Արագյալի հանրային դպրոցում (տնօրեն` Վանիկ Զուռնաչյան), ուր այս ուստարում ճանապարհում են 9 եւ ընդունում 6 աշակերտի:

Հավելենք այն ուրախալի փաստը եւս, որ Նինոծմինդայի մունիցիպալիտետի շրջանավարտների թվում են 18 ոսկե եւ 9 արծաթե մեդալների հավակնորդներ. ցուցանիշ, որն այս վերջին տարիների կայունությամբ չի զիջում իր դիրքերն ու նվաճած մեդալների առումով, երկրի առաջատարների շարքում է:

*ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

# ԱԼԿՈՀՈԼԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ



***Այն, որ ալկոհոլը օրգանիզմի վրա բացասական ազդեցություն է գործում, քաջ հայտնի է: Սակայն, հետաքրքիր է, գիտականորեն ինչպե՞ս է բացատրվում ալկոհոլի նկատմամբ միտվածությունը:***

*Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ*

*Բոլնիսիի շրջան*

Տարբերակվում է ալկոհոլի չարաշահման երեք փուլ: Առաջինը, ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության, կանոնավոր ալկոհոլային հարբեցումն է, որի հետեւանքով մարդը կարող է վնաս հասցնել իր ֆիզիկական եւ հոգեկան առողջությանը կամ հասարակությանը: Այդպիսի դեպքերում, անհատն ավելի շատ ոգելից խմիչք է ընդունում, քան թույլատրվում է առողջապահական մարմինների կամ օրենքի կողմից: Երկրորդ փուլում հարբեցումն արդեն իսկ վնասած է լինում մարդու ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը, սակայն, դեռ կախվածություն առաջ բերած չի լինում: Երրորդ փուլը ալկոհոլությունն է՝ «ոգելից խմիչքի հանդեպ անզուսպ հակումը»: Անհատը խմիչքի սուր պահանջ է զգում, շարունակում է խմել, չնայած դրա հետեւանքով առաջացած խնդիրների, եւ վատ է զգում իրեն ալկոհոլի բացակայության դեպքում:

Եվս մի հետաքրքիր հանգամանք. առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, Լիտվայի բնակիչներն ալկոհոլի օգտագործման մակարդակով, 2016 թվականին դարձել են համաշխարհային առաջատարներ:

Լիտվայում 2016-ին մեկ բնակիչը միջինը օգտագործել է 16 լիտր ալկոհոլ: Երկրորդ տեղում է Բելառուսը, որտեղ երկրի յուրաքանչյուր բնակչի մեկ տարում բաժին է ընկել 15 լիտր ալկոհոլ: Երրորդ հորիզոնականը զբաղեցրել է Լատվիան՝ յուրաքանչյուր բնակչին բաժին ընկած 13 լիտրով:

Ռուսաստանը եւ Լեհաստանը զբաղեցրել են 4-րդ հորիզոնականը՝ յուրաքանչյուր քաղաքացու բաժին ընկնող 12-ից մի փոքր ավելի լիտր ալկոհոլի ցուցանիշով:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

# ԱՇԽԱՐՀԻ 50 ԱՄԵՆԱԱԶԴԵՑԻԿ ՄԱՅՐԵՐԻՑ ՄԵԿԸ ՀԱՅՈՒՀԻ Է



***Ոսկերչական Alex&Ani զարդերի ապրանքանիշի հիմնադիր, ամերիկահայ գործարար, 51-ամյա Կարոլին Ռաֆայելյանն ընդգրկվել է ամերիկյան Working Together ամսագրի կողմից կազմված «Աշխարհի 50 ամենաազդեցիկ մայրեր» վարկանիշային ցուցակում: Վարկանիշային աղյուսակում Կարոլին Ռաֆայելյանը 19-րդ հորիզոնականում է:***

Alex&Ani ապրանքանիշն աշխարհում ամենահայտնի զարդերի ապրանքանիշերից է:

Կարոլին Ռաֆայելյանը ծնվել է 1966թ. ԱՄՆ-ում, Արեւմտյան Հայաստանից հեռացած հայ փախստականների ընտանիքում: Կարոլինի ծնվելու տարին նրա հայրը հիմնել է ոսկերչական ընկերություն ու երկար տարիներ հաջողությամբ զարգացրել բիզնեսը:

Կարոլին Ռաֆայելյանը ստեղծել է եզակի, սակայն ոչ թանկ զարդեր կենդանակերպի նշաններով, որոնք դարձել են նրա բրենդի հիմքը: Արդեն 2010թ. ընկերության զուտ եկամուտը կազմել է 2 մլն դոլար:

2015թ. Կարոլինի բիզնեսի տարեկան եկամուտն արդեն կազմում էր 230 մլն դոլար: Նա բացեց ավելի քան 70 սեփական խանութ ողջ երկրում:

2016թ. Forbes ամսագիրը նրան ներառեց ինքնուրույն հարստացած կանանց վարկանիշային աղյուսակում: Նա զբաղեցրեց 22-րդ հորիզոնականը՝ 700 մլն դոլար կարողությամբ, իսկ նրա ընկերության կապիտալիզացիան Forbes ընկերությունը գնահատեց 1 մլրդ դոլար:

Կարոլին Ռաֆայելյանն ակտիվ բարեգործ է: Նա տարբեր ծրագրերի համար հատկացրել է ավելի քան 30 մլն դոլար: Այդ գումարների մի մասը նա նվիրաբերել է «Հայաստան» հիմնադրամին:

«Աշխարհի 50 ամենաազդեցիկ մայրեր» վարկանիշային աղյուսակը գլխավորել է Bill & Melinda Gates Foundation բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Մելինդա Գեյթսը՝ Բիլ Գեյթսի կինը: Առաջին հնգյակում ընդգրկվել են ծագումով պաղեստինցի ամերիկացի ակտիվիստ Լինդա Սարասուրը, Save the Children կազմակերպության ղեկավար, դանիացի Հելլե Թորնինգ-Շմիդտը, հայտնի իրավապաշտպան Ամալ Քլունին եւ երգչուհի Ադելը:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

***Մեզանից յուրաքանչյուրը, ծննդյան պահից ի վեր, այս կամ այն անվամբ է կնքվում, հետագայում նաեւ դրանով տարբերվելու համար:***

Անունների առաջացումն արմատներով գնում է մարդկության ծագման ամենավաղ շրջաններ: Արդեն, խոր հնադարում, մարդկանց կոչում էին մտացածին բառերով, որոնք համապատասխանում էին արտաքին տվյալներին, կամ էլ բառերով, որոնք արտահայտում էին երեխային որոշ տվյալներով օժտված լինելու ծնողների ակնկալիքները:

Օրինակ, հայկական **Հրաչյա** անունը նշանակում է հուր աչքեր ունեցող:

Շատ հայկական արական անուններ կազմվում են հետեւյալ օրինաչափությամբ. «այր»-(հայերեն՝ տղամարդ) բառից առաջ ավելացնելով բնութագրիչ որեւէ ածական:

Նույն տարբերակով իգական անուններից շատերը կազմվում են «դուխտ»- (հայերեն՝ դուստր) բառից առաջ ավելացնելով որեւէ արական անուն (հիմնականում աղջկա հոր անունը): Օրինակ՝ **Որմիզդուխտ**, **Հայկանդուխտ** եւ այլն:

Շատ ժողովուրդների մոտ անուններն առաջացել են կուռքերի անուններից: Հայկական անունների որոշ մասն էլ առաջացել է կենդանիների, բույսերի եւ բնության երեւույթների անվանումներից: Դրանցից են օրինակ՝ **Գառնիկ**, **Այծեմնիկ**, **Աղավնի**, **Արծվիկ**, **Շուշան**, **Նարգիզ**, **Եզնիկ**, **Մանուշակ**, **Հասմիկ**, **Ծաղիկ** եւ այլն: Սակայն, նրանց առաջացումը կապված չէ այս կամ այն բնական երեւույթի, կենդանու կամ թռչնի երկրպագելու կամ պաշտելու հետ, ինչպես ընդունված է Սամոա կղզում: Այստեղ երեխայի ծնվելու ժամանակ տվյալ ցեղի ավագ անդամը հերթով տալիս է կուռքերի անուններ: Այն անունը, որը տրվում է հենց երեխայի ծնվելու պահին, այդ անվամբ էլ կնքվում է երեխան: Այս տիպի հայկական անունները հիմնականում ուժի, գեղեցկության ու քնքշության արտահայտումն են:

Հին Արեւելքում, մասամբ՝ նաեւ Հին Հայաստանում, գոյություն ունեին հատուկ անուններ, որոնք առաջացել էին աստվածների անուններից:

Դրանց թվին են պատկանում օրինակ՝ **Արամազդ**, **Անահիտ**, **Աստղիկ** անունները: Քրիստոնեության ընդունումից հետո, հիմնականում տարածում գտան Հին եւ Նոր Աստվածաշնչերում տեղ գտած անունները:

Սակայն, զարգացած մշակույթ ունեցող ազգերը պահպանել էին նաեւ իրենց հնագույն անունները: Քրիստոնեական անունները տարածվեցին համարյա բոլոր եվրոպական պետություններում: Սակայն յուրաքանչյուր ազգ դրանք ձեւափոխեց իրեն յուրահատուկ ձեւով: Օրինակ՝ **Հովհաննես** անունը իտալերեն դարձավ **Ջովաննի**, ֆրանսերեն՝ **Ժան**, լեհերեն՝ **Յան**, անգլերեն՝ **Ջոն**, ռուսերեն՝ **Իվան**: Նման ձեւով հայկական կենցաղ մտան նաեւ **Կարեն**, **Աբել**, **Եվա**, **Լազար** անունները:



Արական եւ իգական անունները զանազանելու համար, կարելի է օգտվել հետեւյալ կանոնից. իգական սեռի անունների մեծ մասն ավարտվում են «ուհի», իսկ արական սեռի անունները հիմնականում «այր» վերջածացներով: Սակայն, ոչ բոլոր հայկական անուններն են նման ձեւով դասակարգվում:

Հայկական անուններում շատ են աշխարհագրական հատուկ անունները (**Հայաստան**, **Արարատ**, **Անի**, **Վանիկ**, **Վանուհի**, **Արաքսի**, **Մասիս**, **Տարոն**): Մի շարք անուններ էլ ունեն կրոնական բովանդակություն եւ համարվում են օտարալեզու քրիստոնեական անունների թարգմանություններ: Օրինակ՝

**Հարություն** - (կապված՝ Քրիստոսի հարության հետ),

**Խաչատուր** - (կապված՝ Քրիստոսի խաչելության հետ),

**Առաքել** - առաքյալ,

**Աստվածատուր** - Աստծո տված:

Վերը նշված անունները թարգմանված են հունարենից:

Կան նաեւ կրոնական բովանդակության նոր անուններ.

**Համբարձում** - (կապված՝ Քրիստոսի համբարձման հետ),

**Գալուստ** - Քրիստոսի գալուստ,

**Սրբուհի** - սուրբ,

**Ավետիս** - (կապված՝ Քրիստոսի սուրբ Ավետիսի հետ),

**Մկրտիչ** - (կապված Մկրտության հետ):

Շատ անուններ մարդու ներքին կամ արտաքին արժանիքների վառ արտահայտումն են.

**Ժիրայր** - ժիր տղամարդ,

**Պատվական** - պատվով այր,

**Համեստ** - համեստ, առաքինի կին,

**Նազան** - քնքուշ, հեզանազ,

**Գեղեցկուհի** - գեղեցիկ կին,

**Մաքրուհի** - մաքրասեր կին:

Որոշ անուններ, չնայած օտար ծագմանը, այնուամենայնիվ, ձեւափոխվել են եւ դարձել հայկական (**Եղիշե**, **Վահրամ**, **Ռուզան**, **Սեդա** եւ այլն): Իսկ կան անուններ, որոնք չնայած օգտագործվում են այլ ազգերում, բայց համարվում են հայկական (**Ռուբեն**, **Սամվել**, **Լեւոն** եւ այլն):

Հայկական անունների հետազոտությամբ խորապես զբաղվել է Հրաչյա Աճառյանը՝ կազմելով իր տեսակի մեջ յուրատեսակ հնգհատոր «Հայկական անձնանունների բառարան»-ը:

Հայերն այն հազվագյուտ ազգերից են, որոնց հաջողվում է համարյա ամբողջությամբ վերծանել իրենց անունները եւ գտնել դրանց ծագման սկզբնաղբյուրները:

Եվ եթե ուշադիր լսեք բացարձակ հնչեղ եւ բովանդակալից հայկական անունները, ապա առանց մեծ դժվարության կհասկանաք նրանց մեջ պարփակված իմաստը.

**Արեւիկ** - արեւ,

**Աստղիկ** - աստղ,

**Ազատ** - ազատ,

**Արփի** - արեւի շող,

**Ռազմիկ** - ռազմիկ,

**Դրախտ** - դրախտ,

**Մարտիկ** - մարտիկ,

**Զեփյուռ** - մեղմ քամի, զեփյուռ:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդիկ կան, որ շողոքորթութենեն չկշտանալով՝ իրենք զիրենք աստվածացնել կուզեն, մարդիկ ալ կան, որ շահու համար ուրիշները կանմահացնեն:

*ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ*
*(1843-1891)*
*Հայ երգիծաբան*

Դու չես կարող անել ոչինչ, թե չժպտաց աստղդ վերից, /Ինչ ուզում եմ, չունեմ ես այն, ինչ չեմ ուզում, տրված է ինձ...

*ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ*
*(1172-1216)*
*Վրաց բանաստեղծ*

Կնոջ հետ երջանկությունը հնարավոր է միայն հոգեկան շփման լիակատար անկեղծության պայմանով:

*ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ*
*(1868-1936)*
*Ռուս գրող*

Վիշտը նույն չափով կարող է կապել եւ արձակել տառապյալի լեզուն:

*ՍԵՐՎԱՆՏԵՍ*
*(1547-1616)*
*Իսպանացի գրող*

Քաղաքավարությունը, շրջահայացությունն ու ներողամտությունն ամրապնդում են միասնություն ե'ւ ընկերների միջեւ, ե'ւ ընտանիքում:

*ՎՈԼՏԵՐ*
*(1694-1778)*
*Ֆրանսիացի փիլիսոփա*

Ով հիանում է ուրիշների առաքինություններով, նա, հիրավի, առաքինություններով է օժտված:

*ՊՈՒԲԼԻԼԻՈՍ ՍԻՐՈՍ*
*(մ.թ.ա. 1-ին դար)*
*Հռոմեացի բանաստեղծ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԸՆՏՐՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 18-ին աշխատանքն սկսեց Հայաստանի վեցերորդ գումարման Ազգային ժողովը: Անդրանիկ նիստում պատգամավորները Ազգային ժողովի նախագահ ընտրեցին Արա Բաբլոյանին, փոխնախագահներ` Արփինե Հովհաննիսյանին, Էդուարդ Շարմազանովին եւ Միքայել Մելքումյանին:*

Մայիսի 19-20-ին պատգամավորները ձեռնամուխ եղան խորհրդարանի մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությանը:

Հայաստանի Աժ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Կորյուն Նահապետյանը, պետական-իրավական եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ` Հրայր Թովմասյանը, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ` Վարդեւան Գրիգորյանը, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ` Խոսրով Հարությունյանը, ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ` Գագիկ Մինասյանը:

## ՓՈԽՎՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԹԻՎԸ ԿԼԻՆԻ 18



*Հայաստանի Ազգային ժողովը հավանություն տվեց Հայաստանի կառավարության նախաձեռնությանը` «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» եւ հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրինանախագծերին:*

Ըստ փոփոխությունների Հայաստանի կառավարության կառուցվածքը համապատասխանեցվում է սահմանադրության փոփոխություններին, համաձայն որի, նախարարների թիվը պետք է լինի տասնութ:

Մայիսի 25-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագրով նշանակել է մի շարք նախարարների: Մասնավորապես, Իգնատի Առաքելյանը նշանակվել է գյուղատնտեսության նախարար, Աշոտ Մանուկյանը` էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար, Վահան Մարտիրոսյանը` տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար, Հրանուշ Հակոբյանը` սփյուռքի նախարար, Վարդան Արամյանը` ֆինանսների նախարար:

Հայաստանի նախագահը հրամանագրով` Վաչե Գաբրիելյանին նշանակվել է Հայաստանի փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար, Էդվարդ Նալբանդյանին` արտաքին գործերի նախարար, Վիգեն Սարգսյանին` պաշտպանության նախարար, Սուրեն Կարայանին` տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար, Դավիթ Հարությունյանին` արդարադատության նախարար:

## ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արտահերթ նիստում ամփոփեց մայիսի 14-ին կայացած Երեւանի ավագանու ընտրությունների նախնական արդյունքները եւ կազմեց արձանագրություն:*

Երեւանի ավագանու ընտրություններին քվեարկելու իրավունք ունեցող 842 հազար 151 ընտրողից մասնակցել է 354 հազար 158 քաղաքացի: «Ելք» կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 70 հազար 731 է կամ 21 տոկոս: «Երկիր Ծիրանի» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 26 հազար 109 է կամ 7,75 տոկոս: Հայաստանի Հանրապետական կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 240 հազար 36 է կամ 71,25 տոկոս:

Ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման տպած կտրոնների թիվը 345 հազար 65 է: Ընտրողներից ստացված համարակալված կտրոնների թիվը` 81: Ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը 345 հազար 146 է, չօգտագործված համարակալված կտրոնների թիվը` 47 հազար 318: Չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը 518 հազար 943 է: Անվավեր քվեաթերթիկների թիվը 8 հազար 259 է:

Արձանագրությունը ստորագրվել է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, հատուկ կարծիք առկա չէ:

Երեւանի ավագանու մանդատները բաշխվել են հետեւյալ համամասնությամբ`

Հայաստանի Հանրապետական կուսակցություն` 46 մանդատ,

«Ելք» կուսակցությունների դաշինք` 14 մանդատ,

«Երկիր Ծիրանի» կուսակցություն` 5 մանդատ:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ` ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ



*Մայիսի 24-ին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի նախագահությամբ քննարկվել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման (Doing Business) 2017թ. միջոցառումների ծրագրի նախագիծը:*

Ներկայացվել են, մասնավորապես, բիզնես սկսելու եւ զարգացնելու համար պահանջվող վարչարարական ընթացակարգերի պարզեցման, ՓՄՁ խթանման, ներդրողների պաշտպանվածության, շինարարական թույլտվությունների ստացման, էլեկտրոնային համակարգերի շարունակական ներդրման, վարկերի հասանելիության, սեփականության գրանցման, ենթակառուցվածքներով ապահովման ցուցանիշների բարելավման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները:

Կարեն Կարապետյանը հանձնարարել է տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարին` Doing Business-2017 միջոցառումների ծրագրի նախագիծը քննարկել բիզնես հանրության ներկայացուցիչների եւ միջազգային գործընկերների հետ, սեղմ ժամկետում լրամշակել նրանց, ինչպես նաեւ շահագրգիռ գերատեսչությունների առաջարկություններով վերջնական տարբերակը ներկայացնել կառավարություն:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ` ԻՆՏԵՐՊՈԼԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ

*Ավստրիայում, մայիսի 16-ից 18-ը կայացած Ինտերպոլի եվրոպական տարածաշրջանային 45-րդ կոնֆերանսում, որին մասնակցում էր Ինտերպոլի եվրոպական 47 եւ այլ տարածաշրջանների 6 անդամ երկրներ, ինչպես եւ 19 միջազգային կազմակերպությունների ավելի քան 170 բարձրաստիճան պատվիրակ, Հայաստանն ընտրվել է Ինտերպոլի եվրոպական կոմիտեի անդամ:*

Կոնֆերանսի օրակարգի առաջնային հարցերից մեկը Ինտերպոլի եվրոպական կոմիտեում երկու թափուր տեղերի ընտրության անցկացումն էր, որի համար հայտ էին ներկայացրել մի շարք երկրներ, այդ թվում` Հայաստանը: Քվեարկությունների արդյունքում, Ինտերպոլի եվրոպական կոմիտեի անդամներ ընտրվեցին Հայաստանը եւ Ավստրիան:

Փաստորեն, Հայաստանը ներկայացված է լինելու Ինտերպոլի եվրոպական կոմիտեում, որը կազմակերպության կարեւոր կառույցներից մեկն է, եւ որը ոչ միայն եվրոպական տարածաշրջանի, այլ նաեւ ողջ կազմակերպության գործունեության քաղաքականության նախաձեռնող, իրականացվելիք գործողությունների նախանշող եւ որոշումներ ընդունող հիմնական մարմին է:

Առաջիկա չորս տարիների ընթացքում, Հայաստանը Ինտերպոլի եվրոպական կոմիտեում ներկայացված է լինելու` ի դեմս Հայաստանում Ինտերպոլի ԱԿԲ-ի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ֆիդանյանի:

### ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ, ՇԱՌԼ, 93-ԱՄՅԱԿԴ



*Երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ, դերասան, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրն իր երգարվեստով յուրահատուկ դպրոց է ստեղծել: Նա երգում է մարդկային հույզերի, անհատի եւ մարդկության ամենանվիրական զգացմունքների, սիրո ու հայրենիքի մասին: Նրա արվեստը սիրում ու գնահատում են ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: Մայիսի 22-ին Մեծն շանսոնյեն տոնում է ծննդյան 93-ամյակը:*

### ԱՐԱՄ ԱԹԵՇՅԱՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

*Պոլսո Հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը հրաժարական է տվել: Հրաժարականի մասին Աթեշյանը հայտարարել է պատրիարքարանում հրավիրած հանդիպման ժամանակ: Նշենք, որ Պոլսո Հայոց պատրիարքարանում մարտի 15-ին գումարված հոգեւորականների ժողովը պատրիարքական տեղապահ էր ընտրել Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանին: Աթեշյանը, սակայն, ընտրությունների արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, ներկայացրել էր նահանգապետարանից ստացված գրությունը, որն իրավաբանորեն անհնար է համարում պատրիարքական ընտրությունների գործընթացի մեկնարկը: Նա հրաժարվել էր հեռանալ պատրիարքական փոխանորդի պաշտոնից` ասելով, որ թուրքական իշխանություններն իբրեւ պատրիարքարանի պաշտոնական ներկայացուցիչ միայն իրեն են ճանաչում:*

### ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Մայիսի 24-27-ին, Հայաստանի սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ եւ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի աջակցությամբ, Տիկնիկների պատկերասրահի «Dolls' Gallery» սրահում ներկայացվեց Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանի բնակիչ, 30-ամյա Արմեն Հովհաննիսյանի «Տիկնիկների աշխարհը» անհատական ցուցահանդեսը:*

### 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԿԱՎԱՐՏԻ 19.618 ԱՇԱԿԵՐՏ

**2017-2018 ուսումնական տարում Հայաստանի հիմնական դպրոցների ավարտական 9-րդ դասարանները կունենան 29.642 շրջանավարտ, իսկ ավագ եւ միջնակարգ դպրոցների 12-րդ դասարանը կավարտի 19.618 սան: Ավարտական եւ պետական ավարտական քննությունները կկազմակերպվեն հունիսի 1-23-ը:**

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(26 մայիսի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է փարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 480,00 | 483,00 |
| ԵՎՐՈ | 536,00 | 542,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,35 | 8,53 |

*Մայիսի 19-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 1,7 դրամով:*

# ՎԱՐԴԱՏՈՆ Է, ՎԱՐԴԱՏՈՆ



Վաղը՝ մայիսի 28-ին, մայրաքաղաքի Վախթանգ Գորգասալու անվան հրապարակում կքեւածի «Վարդատոնը»: Ժամը 10:30-ին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցում կմատուցվի տոնական պատարագ, հավարտ որի, ծաղիկներ կխոնարհվեն գավթում հանգչող բանաստեղծի շիրմին: Արդեն ժամը 12:00-ին կկայանա հանդիսույթ եւ համերգ՝ նվիրված Մեծն Սայաթ-Նովային:

ԿՐԹԱԿԱՆ

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՆ



*Վրաստանում Միասնական ազգային քննությունները վրաց լեզվի եւ գրականության քննությամբ կմեկնարկեն հուլիսի 3-ին: Այդ մասին հայտարարել է քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին:*

Վրաստանում բուհի դիմորդները պարտավոր են հաջողությամբ հանձնել երեք պարտադիր առարկա՝ ընդհանուր ունակություններ, վրաց լեզու եւ գրականություն ու օտար լեզու, ինչպես նաեւ մեկ քննություն՝ ընտրությամբ:

Նշենք, որ 2016 թվականին Միասնական ազգային քննություններին մասնակցել է ավելի քան 3805 հազար դիմորդ: Այս տարի քննություններին մասնակցելու համար արդեն գրանցվել է 41,2 հազար դիմորդ:

Միասնական ազգային քննությունների անցկացման համար, երկրում կբացվի քննական 23 կենտրոն: Քննությունները կավարտվեն հուլիսի 27-ին:

Նախորդ տարվա նման, այս տարի եւս Միասնական ազգային քննությունները մասնակիորեն կանցկացվեն, այսինքն, այդ ճանապարհով ստանալով հարցերը,՝վոր:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՅԻՍ



***28.05.2016. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից***

301 թվականին Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որն սկիզբ դարձավ հայոց Մեծ դարձի: Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից Հայոց եկեղեցու մեծ տոներից է, որ հիշատակվում է Հռիփսիմյան եւ Գայանյան տոներին հաջորդող շաբաթ օրը: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ:

***29.05.2016. Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի***

Հայոց եկեղեցու մեծ տոներից է Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոնը:

***30.05.2016. Բեթղեհեմի մանուկների, Ակակիոս վկայի, Մովկիմա քահանայի եւ Կոտրիատիոս զինվորի հիշատակության օր***

ՖՈՒՏԲՈԼ

# ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ



Հայաստանի հավաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան, 28-ամյա Հենրիխ Մխիթարյանը, ՈւԵՖԱ-ի պաշտոնական կայքում անցկացված քվեարկության արդյունքներով, ճանաչվեց Եվրոպայի լիգայի եզրափակիչ փուլի լավագույն ֆուտբոլիստ:

Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում, անգլիական «Մանչեսթեր Յունայթեդ»-ը Եվրոպայի լիգայի եզրափակիչ փուլում 2:0 հաշվով առավելության հասավ Հոլանդիայի Ամստերդամ քաղաքի «Այաքս» թիմի հետ խաղում երկրորդ գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ Հենրիխ Մխիթարյանը:

Նա Եվրոպայի լիգայի եզրափակիչ փուլում տարած հաղթանակը նվիրել է բոլոր հայերին: Այս մասին Մխիթարյանը գրառում է կատարել թվիթերյան միկրոբլոգում:

- Այնքան այնքան ուրախ եմ մեր հաղթանակով: Ես նվիրում եմ այս մրցանակը իմ ընտանիքին, Մանչեսթերին ու բոլոր հայերին,- գրել է Մխիթարյանը՝ գրառման կողքին դնելով Հայաստանի դրոշը:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԻ ՓԱՌԱՏՈՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

*Մայիսի 18-ին, Ազգային տարազի Համաշխարհային օրվա կապակցությամբ, «Մուրջի» եւ «Ջավախք» պարային համույթները, Ախալքալաքիում կազմակերպեցին ազգային տարազի աննախադեպ եւ յուրահատուկ տոն:*



«Մուրջի» համույթի պարուսույց Գիորգի Մետրեւելիի եւ Ախալքալաքի Մշակույթի տան տնօրեն Ալիկ Քսպոյանի նախաձեռնությամբ, տեղի համույթները կազմակերպեցին զգեստների շքերթ-համերգ: Հայկական եւ վրացական ազգային տարազներով, տարբեր տարիքի պարողներ ու երգիչներ, հավաքվեցին «Մշակույթի տան» մոտ՝ քայլերթով եւ դրոշներով շարժվելով դեպի Խաս Բախչա կենտրոնական զբոսայգի: Կայացավ համերգ, հայ եւ վրացական պարերի եւ երգերի հաջորդականությամբ:

- Ազգային տարազները, դրանք երկրի պատմությունն են ու ավանդույթները: Քանի որ տարբեր ազգեր ունեն տարբեր տարազներ, մենք ցանկանում ենք ներգրավել բոլոր անկախ կոլեկտիվներին, որպեսզի հաջորդ տարի միանան շքերթին: Հույս ունենք, որ ավանդույթը կշարունակվի երկար տարիներ,- ասում է «Մուրջի» համույթի պարուսույց Գիորգի Մետրեւելին:

Արդեն 2 տարի է՝ Վրաստանում նշում են Ազգային տարազների տոնը: Այս տարի, Վրաստանի 21 քաղաքներում նշվեց այս տոնը:

***ԿԱՏՅԱ ՄՈՍՈՅԱՆ***

*ք.Ախալքալաքի*



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բերդ-ամրոց Վրաստանի Ախալցիխե քաղաքում: 4.Հերոս Գ.Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունում: 11.Դերերգ օպերայում: 12.Ռուս գրող Մ.Գորկու պիեսներից՝ «... Բուլիչեւը եւ ուրիշներ»: 13.Նար-Դոսի «Ես եւ ...» վիպակը: 14.... շնորհակալություն: 15....-գնալ: 18.Կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի ծննդավայր քաղաքը Վրաստանում: 19.Վայրի ելակ: 21.Քաղաք Իրանում: 23.Ներքնահարկ: 25.Վրացական համեմունքուտեստ: 26.Գեր, բտեցված, չաղացրած, պարարտացված: 30.Ֆրանսիացի ազգային հերոս ... դ՝ Արկ: 35.Չինաստանի պետական-քաղաքական գործիչ ... Ցզե Դուն: 36.Քաղաք եւ վարչական կենտրոն Չինաստանում: 37.Գրական ստեղծագործություն: 38.Մաշտոցյան այբուբենի տառ: 40.Արցախը Հայաստանին կապող միջանցք: 44.Ջաջուռցի որմնանկարիչ ... Ավետիսյան: 47.Թիֆլիսում 1905-1917 թթ. լույս տեսած հանդես-ամսագիր: 48.Թռչնաֆաբրիկա Վրաստանում: 50.Հայկական ամսանուն: 51.Նկարչի ստեղծածը: 52.Լեւոն Շանթի հերոսուհիներից: 54.Նար-Դոսի ստեղծագործություններից: 55.Ե'վ ծաղիկ, ե'ւ իգական անուն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Արեւմտահայ գրող Սիամանթոյի իսկական անունը՝ ... Յարճանյան: 3.Հայ ճարտարապետ, Հայաստանի պատմության թանգարանի նախկին տնօրեն ... Թորոմանյան: 4.Գիքորի քույրը: 5.Պետություն Ասիայում: 6.Երրորդ նոտան: 7.«... ու զարդարանք ինչիդ են պետք» (Գուսան Շերամ): 8.Ա.Դյումա «... թագուհին»: 9.Թխվածքի տեսակ: 10.Օպերային երգիչ, տենոր ... Գրիգորյան: 16.«Ով է ..., ով մեղավոր, մենք չդատենք» (Ի.Կռիլով): 17.Քիմիական տարր Դ.Մենդելեեւի աղյուսակում: 18.«...ն ընկավ դռնեդուռ, էլ չթողեց դուռկտուր» («Մկների ժողովը»): 20.Գազանի բույն: 21.Թղթախաղի սիրահար, խաղամոլ: 22.Ժամանակի միավոր: 24.Քաղաք Սյունիքի մարզում: 25.Պետություն Աֆրիկայում: 27.Երգիչ ... Շահմուրադյան: 28.Լեռնաշղթա Հարավային Ամերիկայում: 29.Քաղաք Ֆինլանդիայում: 31.Քաղաք ԱՄՆ-ում: 32.Ամերիկացի գրող Էդգար Ալան ...: 34.Սրբադասված հայ բանաստեղծ Գրիգոր ...: 39.Երիտասարդ երգչուհի ... Եգանյան: 41.Քրիստինե Պեպելյանի երգացանկից «... կարելի, չէ»: 42.Վերջածանց: 43.Ոչ հորինված, ճշմարիտ: 45.Ալ.Շիրվանզադեի «Քաոս» վեպի հերոսներից: 46.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 47.Պոլսում հրատարակվող «Ակոս» թերթի սպանված խմբագիր ... Դինք: 49.Օպերային երգիչ, տենոր, Սարոյի դերակատար ... Պետրոսյան: 53.Անձնական դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Շիկամուկ: 9.Ուռենի: 10.Կտուց: 11.Օգտակար: 13.Ելցին: 16.Անո: 17.Տուփ: 19.Անլուռ: 22.Հուզիչ: 24.Կնոպկա: 25.Զագս: 27.Առնոլդ: 29.Հենզել: 32.Անաղի: 33.Ասիդոլ: 35.Կծել: 38.Ամա: 40.Լաուրա: 41.Քարբ: 44.Հանք: 47.Մկա: 48.Ալավ: 50.Պաստա: 51.Շեր: 52.Զի: 53.Իլի: 54.Ռուի: 55.Դեգա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ցինգա: 2.Մակատ: 3.Դուկատ: 4.Գուցե: 5.Լենց: 6.Լիոն: 8.Կտրուկ: 12.Տնազ: 14.Լինո: 15.Իշուկ: 18.Ճչալ: 19.Անգեղ: 20.Լպուզ: 21.Ռաուլ: 23.Իզոլդա: 26.Գդալ: 28.Ռուսա: 29.Հան: 30.Նիկա: 31.Եղեր: 34.Իմանալ: 36.Ծույլ: 37.Լատվիա: 39.Արկ: 42.Ամառ: 43.Բաշի: 45.Ապի: 46.Քսի: 48.Արդ: 49.Ազգ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445